ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է Մ.Խորենացու 3,7 հասցեում, ստորև ներկայացնում է 13 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2012թ-ի սեպտեմբերի 28-ին կնքված պայմանագրում 2017թ-ի մարտի 2-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: 2017թ-ին մատուցվելիք ծառայության դիմաց նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Հաստատվել է վճարման ժամանակացույց:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10.02.2011թ-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ հիմք ընդունելով 28.09.2012թ-ի թիվ 13 պայմանագրի 3.1 կետը և դրանում փոփոխություն կատարելու մասին 25.03.2014թ-ին կնքված համաձայնագրի 1-ին կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Քնարիկ Ջուլհակյան:

Հեռախոս՝ 060 544 703:

Էլ. փոստ՝ knar_julhakyan@taxservice.am:

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
28.09.2012թ. կնքված թիվ 13 ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ՀՀ քաղաք Ապարան **,, 02 ,, մարտի 2017թ.**

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի **ԱՊԱՐԱՆԻ** քաղաքապետարանը, որի անունից լիազորագրով (լիազորագիր թիվ 020/, տրված՝ 15.02.2017թ.) հանդես է գալիս ֆինանսական բաժնի պետ՝ **ՎԱՀԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ**, ծնված՝ 22.02.1955թ., անձնագիր՝ AH0545742, տրված՝ 07.03.2008թ., 023-ի կողմից, հաշվառված՝ Արագածոտն մարզ, ք. Ապարան, Չարենցի փողոց, տուն 10 հասցեում, այսուհետ՝ ,,**ՎԱՐՁԱՏՈՒ**,, և ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս Աշտարակի տարածքային հարկային տեսչության սպասարկման բաժնի ավագ հարկային տեսուչ՝ **ՇԻՐԱԶ ՔԱՋԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**, ծնված՝ 12.04.1977թ., անձնագիր՝ AN0202890, տրված՝ 22.07.2012թ., 023-ի կողմից, հաշվառված՝ Արագածոտն մարզ, ք. Ապարան, Գայի փողոց, 3-րդ շենք, բնակարան 6 հասցեում, այսուհետ՝ ,,**ՎԱՐՁԱԿԱԼ**,, , կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը որոշեցին ,,Ապարան,, նոտարական տարածքի նոտարի կողմից 28 սեպտեմբերի 2012թ. հաստատած և սեղանամատյանի 725 համարով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի 5.1 կետում կատարել հետևյալ փոփոխությունները:

2. Համաձայնագրի առարկան

2.1. Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին՝ փոփոխել պայմանագրում նշված վարձավճարի մուծման ժամանակացույցը, ըստ իրենց կողմից համաձայնեցված և ներկայացված հավելված 1-ի:

2.2. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2017թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. Այլ պայմաններ

3.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

3.2. Սույն պայամանգիրը կնքված է հայերեն լեզվով, կողմերի ցանկությամբ չորս (4) օրինակից որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.4. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>	<<ՎԱՐՁԱԿԱԼ>>
Ապարանի քաղաքապետարան **Հասցե՝ ք. Ապարան, Բաղրամյան 26** **ՀՎՀՀ 05201986** **Հ/Հ 900455101064** **ՀՀ Արագածոտն մարզի** **Ապարանի քաղաքապետարանի** **Ֆինանսական բաժնի պետ՝**	**ՀՀ կառավարությանն առընթեր պետական** **եկամուտների կոմիտե** **ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7** **ՀՎՀՀ 02647057** **Հ/Հ 900441000933** **Աշտարակի ՏՀՏ ՍԲ ավագ** **հարկային տեսուչ՝**
_____ **Վ. Միքայելյան** (ստորագրություն)	_____ **Շ. Գրիգորյան** (ստորագրություն)

Նոտարական ակտի կոդ: 563-20170302-37-1023095
Նոտարական ակտի գաղտնագիր: KTVRAP

Երկու հազար տասնյոթ թվականի մարտի երկուսին, 02.03.20172.
Սույն վարձակալության պայմանագիրը վավերացվել է իմ՝ ,,**Ապարան**,, նոտարական տարածքի նոտար **Սիրեկան Ռաֆիկի Հովհաննիսյանիս** կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Վարձակալության պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ներկայացուցիչների լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են: ՀՀ քաղ. օրենսգրքի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:
Գրանցված է գրանցամատյանում թիվ-***113***-ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար դրամ և ծառայության վճար ութ հազար դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Սիրեկան Ռաֆիկի Հովհաննիսյան

Հավելված 1
28.09.2012թ. կնքված և սեղանամատյանում թիվ 13 համարով գրանցված
անշարժ գույքի վարձակալության պայմանագրումփոփոխություններ
կատարելու նպատակով ,,02,, մարտի 2017թ. թիվ 4 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
N	Ծառայության անվանումը	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ք. Ապարան, Բաղրամյան 26 հասցեում գտնվող վարչական շենքից 61.51քմ. տարածքի վարձակալության ծառայություն	30 755	61 510	92 265	123 020	153 755	184 530	215 285	246 040	276 795	307 550	369 060	369 060

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

Ապարանի քաղաքապետարան
Հասցե՝ ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05201986
Հ/Հ 900455101064
ՀՀ Արագածոտն մարզի
Ապարանի քաղաքապետարանի
Ֆինանսական բաժնի պետ՝

_____ Վ. Միքայելյան
(ստորագրություն)

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900441000933
Աշտարակի ՏՀՏ ՍԲ ավագ
հարկային տեսուչ՝

---------- Շ. Գրիգորյան
(ստորագրություն)